ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 թվականի մարտի 11-15-ը Ճապոնիա,
քաղաք Տոկիո գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Մայրանուշ Մանվելյան – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները

Ճապոնիա, քաղաք Տոկիո, մարտի 11-15-ը:

2. **Հրավիրող կողմը**

Աշխատաժողովը կազմակերպվել էր Ասիական զարգացման բանկի (ADB) կողմից և նվիրված էր Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (Tax Administration Diagnostics Assessment Tool - TADAT) ներդրմանը: Աշխատաժողովին մասնակցում էին Ասիական և խաղաղօվկիանոսյան հարկային վարչարարության և հետազոտությունների ուսումնասիրության խմբի (Study Group on Asia-Pacific Tax Administration and Research - SGATAR) և Ասիական զարգացման բանկի խմբի (Asian Development Bank - ADB) երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոնղոլիան, Ճապոնիան, Վիետնամը, Ֆիլիպինները, Թաիլանդը, Մալդիվները, Ինդոնեզիան, Պակիստանը և այլն:

3. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Աշխատաժողովը նվիրված էր Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի ներդրմանը:

Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքը գնահատում է հարկային վարչարարության գործունեության ելակետային վիճակը, որի հիման վրա կարելի է սահմանել բարեփոխումների առաջնահերթ ուղղություններ, իսկ հետագայում կրկնվող գնահատումների միջոցով՝ ներկայացնել բարեփոխումների ձեռքբերումները: Այն ներդրվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), Համաշխարհային բանկի

(ՀԲ) և այլ կառույցների կողմից և լայնորեն կիրառվում է տարբեր պետություններում հարկային վարչարարության որակի գնահատման նպատակով:

TADAT-ը կարող է օգտագործվել ցանկացած երկրի կողմից՝ իրենց հարկային վարչարարության համեմատաբար ուժեղ և թույլ կողմերը պարզելու նպատակով: Այն գնահատում է հարկային մարմնի «կատարողականը» վարչարարության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ դիտարկվում են չափման 55 բաղադրիչներ, որոնք միավորվում են 32 համընդհանուր ցուցանիշներում, իսկ վերջիններս էլ հետևյալ 9 գործունեության արդյունքի ոլորտներում (Performance Outcome Area - POA)՝

1. Հարկ վճարողների հաշվառման բազայի ամբողջականություն,
2. Ռիսկերի արդյունավետ կառավարում,
3. Օժանդակություն կամավոր կարգապահությանը,
4. Հարկային հաշվետվությունների ժամանակին ներկայացում,
5. Հարկերի ժամանակին վճարում,
6. Հաշվետվություններում արտացոլված տվյալների ճշգրտություն,
7. Հարկային վեճերի արդյունավետ լուծում,
8. Պետական եկամուտների արդյունավետ կառավարում,
9. Հաշվետու և թափանցիկ գործելակերպ:

Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) կիրառմամբ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2016 թվականին իրականացվել է հարկային վարչարարության համակարգի գնահատում, որի նպատակն էր վեր հանել համակարգի ձեռքբերումներն ու բացթողումները՝ սահմանելով հետագա բարեփոխումների առաջնահերթությունները:

4. Քննարկված թեմաները

Աշխատաժողովի ընթացքում փորձագետների կողմից ներկայացվել է Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի մեթոդաբանությունը, վերջինիս կիրառության շրջանակները, առավելություններն այլ համանման գործիքների նկատմամբ: Անդրադարձ է կատարվել նաև տարբեր երկրներում գործիքի կիրառության լավագույն փորձին: Թեմայի շուրջ եղել են առանձին խմբային քննարկումներ:

Ներկայացվել է մասնակից երկրներում TADAT գործիքի կիրառության արդյունքների համեմատական վերլուծությունը և դրա հիման վրա բարեփոխումների կարիք ունեցող ուղղությունները:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ելույթներով հանդես են եկել Ճապոնիայի, Մոնղոլիայի, Պակիստանի և Մալդիվների ներկայացուցիչները:

Քննարկումների ընթացքում երկրների միջև եղել է փորձի փոխանակում մի շարք թեմաների շուրջ՝ մասնավորապես.

- ինչպե՞ս են իրականացվել TADAT գնահատման նպատակով անհրաժեշտ տվյալների հավաքագրման աշխատանքները,
- ինչպե՞ս են հետագայում օգտագործվել գնահատման արդյունքները,
- որո՞նք են եղել գնահատման իրականացման խոչընդոտները և ինչպե՞ս են դրանք հաղթահարվել:

Ելույթ են ունեցել նաև Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և TADAT քարտուղարության ներկայացուցիչները՝ նշելով հարկային մարմիններում վարչարարության արդյունավետության գնահատման նպատակով իրենց կողմից հնարավոր աջակցության ուղղությունները:

Որպես ամփոփում կազմակերպիչները և մասնակիցներն ընդգծել են իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման կարևորությունը հետագա բարեփոխումների ուղղությունների նախագծման շրջանակներում և պարբերաբար TADAT գնահատման իրականացման անհրաժեշտությունը:

6. Ստորագրությունը, ամսաթիվը

Մայրանուշ Մանվելյան
20.03.2024թ.